ԼՐԱՑԱՎ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԸ

ՀԵՏԱԴԱՌ ՀԱՅԱՑՔ

1955 թ. հոկտեմբերի 2-ին Մայր Տաճարում, ըստ կարգաց և կանոնաց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, վեհաշուք հանդիսությամբ կատարվեց այսօր արդեն երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի կաթողիկոսական օծումը: Այդ օրը համայն հայությունը մաքուր սրտով, բաց ճակատով, զանգերի ուրախ դողանջներով, աջհամբույրով ողջունեց Ամենայն Հայոց Ընտրյալ Վազգեն Ա Կաթողիկոսին: Հանձին Վազգեն Ա Վեհափառի, Հայաստանյայց Եկեղեցին ունեցավ պայծառ մտքով, հավատավոր, նվիրված, գործունյա ու շինարար Կաթողիկոս:

Դեռևս 1935 թ. Բուխարեստում հրատարակվող «Հերկ» ամսագրում ապագա Կաթողիկոսը մարգարեաբար գրել է. «*Հայ ապագայի համար ատաղձ կառուցանել, նյութական և մանավանդ մտավոր ու հոգեկան իմաստով, ահա մեր օրերուն մեծ խնդիրը: Կառուցել՝ ցեղին հոգիեն բխող զգացումներու թելադրանքին տակ...*»: Սակայն հայոց պատմության ոգին խորապես ըմբռնած, ազգի լինելության գաղտնարանները ներթափանցած Հայոց ապագա Հայրապետը, որ 1935 թ. դեռևս երիտասարդ էր, դեռ ոչ փորձաշատ և նոր էր սկսում իր մշակութային-քաղաքական գործունեությունը, ի լուր ամենքի հայտարարում էր սեփական ազգի ոգու վերանորոգման հրամայականի մասին: Տարիներ անց Վազգեն Ա Ընտրյալ Կաթողիկոսը, ոտքը հայոց չարչրկված հողին դեռ նոր դրած, արդեն կառուցելու, վերաշինելու, շենացնելու ոսկեղեն տեսիլքներ էր ունենում՝ հայացքը հառած Լուսավորչի մշտավառ կանթեղին, մտովի հաղորդակցվում Զվարթնոցը հրաշազարդող Ներսես Շինողի, Հռիփսիմեն նշանակերտող Կոմիտասի, Անին հրաշակերտող մեծն Տրդատի, Աղթամարի քարեղեն երազը մարմնավորող Մանվելի, հանճարեղ Թամանյանի մեծ ավանդներին:

Եվ այսօր, երբ հետադարձ մի հայացք ենք գցում Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի գահակալության շուրջ 40-ամյա կառուցողական գործունեությանը, նոր ենք միայն ըմբռնում, որ 1935 թ. մարգարեացած «հայ ապագայի համար ատաղձ կառուցանել...» տողերը կարող են բանալի դառնալ՝ հասկանալու, թե այդ ի՞նչ հրաշքով երջանկահիշատակ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ
(1994 թ., ՀՈՒՆՎԱՐԻ 6, ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԱՐԱԳԸ)

Կաթողիկոսը, գահ բարձրանալու առաջին իսկ օրից, սկսեց կառուցել, ստեղծել ու հրաշակերտել անսպառ եռանդով, անվերջ ու անդադրում: Որքա՜ն խորհրդանշական է, որ Ներսես Շինող, Կոմիտաս Կաթողիկոս, Տրդատ, Մանվել, Թամանյան մեծ ճարտարապետների աշխարհաշեն երկրում ժողովուրդը Վազգեն Ա Վեհափառին պատվեց ամենամեծ տիտղոսով՝ կոչելով նրան «Շինարար»: Հայոց հյուրընկալ աշխարհում սիրո ու հարգանքի ավելի մեծ դրսևորում դժվար է գտնել: Իր գահակալության շուրջ 40 տարիների ընթացքում Վեհափառ Հայրն անմնացորդ նվիրվեց հայ ժողովրդի, նրա հոգևոր մշակույթի ծաղկմանն ու հարատևմանը:

Վազգեն Ա Վեհափառը (Լևոն-Կարապետ Աբրահամի Պալճյան) 1955 թ., հայրապետական օծում ստանալուց չորս օր հետո, եպիսկոպոս է ձեռնադրում յոթ վարդապետների և երկու օր անց, 12 եպիսկոպոսների ընկերակցությամբ ու շքեղ հանդիսավորությամբ, կատարում Սրբալույս Մյուռոնի օրհնություն, որը 30 տարի ի վեր չէր կատարվել Ս. Էջմիածնի Մայր Տաճարում: Ապա 1957 թ., Հայոց Հայրապետի համառ ջանքերի շնորհիվ, Մայր Աթոռին վերադարձվեց հայտնի բարերար Մանթաշյանի նվիրատվությամբ կառուցված Նոր Վեհարանի շենքը: Այն վերանորոգվեց և դարձավ գեղեցիկ մի կառույց, իսկ Հին Վեհարանն իր Ծաղկյա դահլիճով վերածվեց «Կաթողիկոսաց» թանգարանի:

Նորին Սրբությունն իր անմիջական հոգածությամբ ստանձնեց Հոգևոր Ճեմարանի, ինչպես նաև այնտեղ դասավանդող դասախոսական կազմի նորացման ու համալրման գործը: Ամեն ինչ արվեց, որպեսզի Հոգևոր Ճեմարանն ավարտած ուսանողները, որոնք կոչված են դառնալու սպասավորները Հայաստանյայց Եկեղեցու, լինեն մեծ իմացականության և բարձր ճաշակի տեր, հոգով մաքուր և ազնիվ հոգևորականներ, հայ ժողովրդի երաժշտական գանձերի և մշակույթի քաջ գիտակ, սեփական ժողովրդին մաքուր սրտով ծառայելու պատրաստակամ մշակներ:

Բազմավաստակ Հայրապետի ուշադրության կենտրոնում եղել է նաև Հայաստանի տարբեր շրջաններում հոգևոր կրթական հաստատություններ հիմնելու հարցը: Նորին Սրբությունն իրականացրեց Խրիմյան Հայրիկի երազանքը՝ վերաբացելով Սևանի հոգևոր դպրանոցը, որը հետագայում անվանվեց Վազգենյան: Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Շիրակի թեմում բացվեց հոգևոր ընծայարան:

1961 թ. Վազգեն Ա Կաթողիկոսի նախաձեռնությամբ և սփյուռքահայերի անշահախնդիր նվիրատվությամբ ժամանակակից սարքավորումներով վերազինվեց Մայր Աթոռի նոր տպարանը, որը հիմնադրվել էր 1771 թ., Սիմեոն Ա Երևանցի Կաթողիկոսի ջանքերով: Կանոնավոր կերպով և մի նոր պայծառությամբ շարունակվեց հրատարակվել Մայր Աթոռի

«Էջմիածին» պաշտոնական ամսագիրը, որը լուսաբանում է Մայր Աթոռի և Հայ Եկեղեցու թեմերի կյանքը, հրատարակում հայ ձեռագրագիտության, աղբյուրագիտության, գաղթավայրերի պատմության, վանքերի վերաբերյալ ուսումնասիրություններ, միջնադարյան մատենագրության անտիպ գործեր, ինչպես նաև անդրադառնում հայոց լեզվի, հայ դպրոցի, տպագրության, մամուլի, ճարտարապետության, եկեղեցական և ժողովրդական երաժշտության պատմությանը:

Վեհափառը նախաձեռնեց Նոր Կտակարանի աշխարհաբար հրատարակությունը: Դեռևս իր անդրանիկ կոնդակում Վազգեն Ա Կաթողիկոսը գրել է. «Պիտի տքնինք վերանորոգելու և վերազարդելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, ինչպիսիք են Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն, Խոր Վիրապը, Օշականը, Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուները կհանդիսանան ու հոչակված տաճարները աղոթքի և ուխտի, և զմայլելի հուշարձանները հայ ճարտարապետության փառքի»: Այդ վեհ նպատակն իրագործելու համար, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, կազմվեց հայ անվանի ճարտարապետներից բաղկացած մի հանձնաժողով, որն ինքնաբուխ նվիրումով և մեծ սիրով իր վրա վերցրեց Մայր Աթոռի և վանքերի ու եկեղեցիների շինարարական-վերակառուցողական աշխատանքների կազմակերպումը՝ Նորին Սրբության անմիջական հսկողությամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդի համագործակցությամբ:

Հանձնաժողովը, որի կազմում էին անվանի ճարտարապետներ Միքայել Մազմանյանը, Կարո Ղաֆադարյանը, Վարազդատ Հարությունյանը, Ռաֆայել Իսրայելյանը, Կոստանդին Հովհաննիսյանը, մանրազնին ուսումնասիրեց և պատրաստեց մի շարք նախագծեր՝ վերանորոգելու և բարեզարդելու ավերակ կամ կիսավեր շատ եկեղեցիներ, վանքեր, որոնք համաշխարհային ճանաչում ունեցող անկրկնելի կոթողներ էին: Ահա ոչ ամբողջական ցանկը վերանորոգված, շենացած, նոր շունչ ու կյանք ստացած կառույցների. Էջմիածնի Մայր Տաճար, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Ծողակաթ, Ս. Աստվածածին, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց, Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս, Ս. Զորավոր, Ս. Հովհաննես, Հրազդանի, Մոսկվայի, Ռոստովի, Արմավիրի եկեղեցիները, Գեղարդի և Խոր Վիրապի վանքերը: Մայրավանքի շրջափակում կառուցվեցին Մեծ Եղեռնի անմեղ նահատակների հիշատակը հավերժացնող հուշարձանը, Խրիմյան Հայրիկին նվիրված հուշարձան-կոթողը, Գալուստ Կյուլպենկյան վանատունը, Ալեք-Մարի Մանուկյան գանձատունը: Բյուրականում կառուցվեց Հայկաշեն ամառանոցը:

Ծնորհիվ Վեհափառ Հայրապետի իմաստուն քաղաքականության և Խորհրդային Հայաստանի կառավարության բարեհաճության, Հայաս-

տանջյալ Եկեղեցու և պետության հարաբերությունները ստացան ողջմիտ ընթացք՝ փոխըմբռնման բարենպաստ հող ստեղծելով Հայ Եկեղեցու գոյատևման և բարգավաճման համար: Բազմավաստակ Հայրապետի հարաճուն ջանքերով արթնացավ ժողովրդի ազգային ոգին Մայր Եկեղեցու նկատմամբ: Ժողովուրդը հնարավորություն ստացավ վերադառնալ իր հոգևոր ակունքներին, խոնարհվեց նախնյաց սրբությունների առջև: Վազգեն Ա Վեհափառը մեծապես նպաստեց Սարդարապատի հուշահամալիրի կառուցմանը, հրապարակեց 1918 թ. մայիսի 28-ը Հայաստանի պետականության վերականգնման օր հռչակող սրբատառ կոնդակը:

Հայ Եկեղեցին բոլոր ժամանակներում էլ եղել է «Հայ ժողովրդի հոգու գանձարանը», որը մարմնավորվեց նաև աստվածապաշտ ու արվեստապաշտ Վազգեն Ա Կաթողիկոսի կերպարում, որ իր հոգում ամբարած բազում դարերի փորձն ու գործը գումարեց հայոց փառքերին, հայոց լույսերին: Եվ բնական է, որ աշխարհի բոլոր կողմերից մեծաթիվ հայեր, հայրենաբաղձ տարագիրներ գալիս էին «Հայոց ժողովրդի գանձարանից» առատորեն տանելու օրհնություն ու լույս, ոգի ու կորով՝ հայորեն ապրելու, հպարտ ապրելու, հայ մնալու իրենց ամենօրյա դժվարին պայքարում:

Ամենայն Հայոց երջանկահիշատակ Կաթողիկոսն իր գահակալության տարիներին կատարել է շուրջ 30 հովվապետական ուղևորություններ, լույս ու հավատք սփռել աշխարհի չորս ծագերում ապրող իր ցիրուցան հոտի բոլոր անդամներին:

1988 թ. փետրվար, ապա նաև դեկտեմբերի 7: Հայ ժողովրդի գլխին կախվեց ծանր արհավիրքների շղթան: Բնականաբար, Ամենայն Հայոց Հայրապետը լծվեց իր ժողովրդին հասցված վերքերն ամոքելու գործին:

Վեհափառ Հայրապետի ջանքերի շնորհիվ կյանքի կոչվեցին Սյունյաց, Գուգարաց, Արցախի թեմերը:

Վազգեն Վեհափառի գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում աշխարհի խաղաղության պահպանման և ամրապնդման գործում, ինչպես նաև միջեկեղեցական (էկումենիկ) շարժմանն իր բերած մեծ ավանդը: 1962 թ. Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Հայաստանյայց Եկեղեցին անդամագրվեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, իսկ հետագայում՝ Եվրոպական Եկեղեցիների Համաժողովին և Կանադայի Եկեղեցական Խորհրդին: Վեհափառ Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև կայացած հանդիպումներն ու փոխադարձ այցելություններն ամրապնդեցին էկումենիկ հարաբերությունները:

Պատմական հատուկ նշանակություն ունի 1970 թ. մայիսին Վազգեն Ա Կաթողիկոսի այցելությունը Վատիկան և հանդիպումը Պողոս Զ Սրբազան

Պապի հետ: Երջանկահիշատակ Կաթողիկոսը հանդիպումներ է ունեցել մեծ թվով բարձրաստիճան քաղաքական գործիչների հետ: Մասնակցել է բազմաթիվ խորհրդաժողովների՝ Պրագայում (1961), Ստոկհոլմում (1962), Հելսինկիում (1965), Մոսկվայում (1982-83), Թիֆլիսում և Երևանում գումարված միջազգային խորհրդաժողովներին՝ միշտ խորիմաստ ելույթներով զորավիգ կանգնելով խաղաղության և ժողովուրդների միջև եղբայրության օգտաշատ գործին: Խաղաղության պաշտպանությանը մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Ժոլիո Կյուրիի անվան (1962) և Խաղաղության Պաշտպանության Խորհրդային Կոմիտեի ոսկե մեդալներով (1968) և բազմաթիվ շքանշաններով՝ որպես արդար գնահատանք իր երկար, բեղմնավոր գործունեության:

Այսօր երբ տարիների բարձունքից ետադարձ մի հայացք ես նետում Ամենայն Հայոց երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի գահակալության տարիների անցած ուղուն, համոզվում ես, որ Նորին Սուրբ Օծությունը բոլորանվեր կերպով է կատարել իրեն վիճակված առաքելությունը, որ նրա սիրտը լի էր սիրով դեպի իր հոտը, որ նա աղոթել ու գործել է հանուն մեր ժողովրդի հոգևոր միասնության, ազգի հարատևման, Հայրենիքի բարգավաճման ու Հայ Եկեղեցու պայծառակերպման:

ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ